

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՎՈՐ ՄՈՂԵԼԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

3. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի տարբեր երկրների տնտեսական զարգացման փորձի ուսումնասիրությունը քերում է այն հասկացման, որ շատ դեպքերում բնական ռեսուրսների առկայությունը, լինելով անհրաժեշտ պայման, դեռ բավարար չէ իրական զարգացման համար: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք տեսնել Կորեայի Հանրապետության, Մալդիվայի, Իռլանդիայի, Բելգիայի և շատ այլ երկրների օրինակում: Բանն այն է, որ նշված երկրներից թեև ոչ մեկն աչքի չի ընկնում նյութական կամ մարդկային ռեսուրսների հարստությամբ, սակայն բոլորն էլ այսօր համաշխարհային հանրությանը զարմանք են պատճառում իրենց տնտեսական զարգացման տեմպերով:

Գաղտնիք չէ, որ ցանկացած երկիր կարող է ունենալ տնտեսական զարգացման բազում հնարավորություններ, ուստի կարևորն այն չէ, թե տվյալ երկիրը դրանցից որն է ընտրում որպես զարգացման ուղի, այլ այն, թե ինչպես է ընթանում ընտրված ուղիով կամ, որ միևնույնն է, տվյալ պետությունը սեփական տնտեսության զարգացման ինչպիսի ռազմավարություն և վերջինիս իրականացման ինչ լծակներ է ընտրում:

Տեսականորեն ընդունենք, որ ցանկացած պետություն իր առջև նպատակ է դնում առավելագույն զարգացնել սեփական տնտեսությունը, բայց գործնականում պարզվում է, որ նախ ոչ բոլորն են հասնում իրենց առջև դրված նպատակին, և երկրորդ՝ հասնողներից շատերի բնական և մարդկային ռեսուրսները ոչ միայն չեն գերազանցում չհասնողների ունեցածին, այլև հաճախ էապես զիջում են դրանց: Այստեղից հետևում է, որ նոր զարգացող կամ չզարգացած երկրների տնտեսական աճի ցածր տեմպերի հիմնական պատճառն այդ երկրների պետության ընտրած ոչ ճիշտ, եթե չասենք սխալ, ռազմավարությունն է: Իսկ ո՞րն է ելքը: Փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերում ամենահեշտ ու ամենակարճ ճանապարհ սեփական «սխալ ռազմավարության» գիտակցումն ու ճիշտ ռազմավարության ընտրումն է: Հենց այդպես վարվեցին Իռլանդիան, Թայվանը, Սինգապուրը, Կորեայի Հանրապետությունը, որոնք ընդամենը մեկ սերնդի ընթացքում թույլ զարգացած երկրներից անցան զարգացածների շարքը: Ընդ որում, գրեթե բոլորն էլ սկսելով գյուղատնտեսության և թեթև արդյունաբերության զարգացումից՝ նոր դարաշրջան թեևակոխեցին գիտատար ճյուղերի արտադրությամբ:

Քանի որ մեզ հետաքրքրում է առաջին հերթին ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարության հարցը, ուստի գտնում ենք, որ այն մշակելու համար ամենից հասանելին հենց Իռլանդիայի փորձն է, քանզի նշված և չնշված զարգացած երկրներից իր բնական և մարդկային ռեսուրսներով, ինչպես նաև մի շարք այլ հատկանիշներով Հայաստանին ցման է եղել հենց Իռլանդիան: Բանն այն է, որ մինչև 1970-ականների սկիզբը Իռլանդիան զանվում էր տնտեսական ճիշտ այն վիճակում, ինչ Հայաստանի Հանրապետությունը՝ 1992թ.: Այսինքն՝ Իռլանդիան նույնպես չունեւր բնական հարուստ պաշարներ, իսկ բնակչությունը ընդամենը 3,7 մլն էր, տարածքային խնդիր ուներ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության (ՄԲ) հետ, քիչ թե շատ գործում էր միայն գյուղատնտեսության ոլորտը, որը կազմում էր ՀՆԱ մոտ 60 տոկոսը¹, գործազրկության մակարդակը բարձր էր, իսկ որակյալ աշխատուժը լքում էր երկիրը՝ աշխատանք փնտրելով ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Արդյունաբերության ոլորտում ընդգրկված էին փոքր թվով արտադրողներ, որոնք գործում էին հիմնականում սննդի, խմիչքի և տեքստիլի ոլորտներում:

¹ Brian R. O' Donnell: Ireland & Europe - challenges for a New Century, in ESRI, 17, March, 1997:

Անշուշտ կարելի է շարունակել այս ընդհանրությունների թվարկումը, բայց կարծում ենք, այսքանն էլ բավական է համոզվելու, որ իսկապես Հայաստանի համար ամենից ուսանելիս Իռլանդիայի փորձն է: Հետևաբար ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարությունը մշակելիս ճիշտ կլինեն օգտվել Իռլանդիայի տնտեսության զարգացման մոդելից, իսկ դրա համար նախ և առաջ պետք է հանգամանորեն ուսումնասիրել այն:

Իրավամբ հարց է ծագում. իսկ ինչպե՞ս, ի՞նչ հրաշքով Իռլանդիան նախկին հետամնաց երկրից դարձավ ներկայիս զարգացած երկիրը և այն էլ ընդամենը 2-3 տասնամյակում: Գիտական բարեխղճությունը պահանջում է ասել, որ դա նրան միանգամից չի հաջողվել, էլ չենք ասում, որ թույլ են տրվել նաև սխալներ, բայց ամենակարևորը՝ Իռլանդիայի կառավարությունը կարողացել է գիտակցել իր սխալը և ուղղել այն: Պարզվում է, որ դեռ 1930-ական թվականներին Իռլանդիայի պետությունը երկիրը տնտեսական ծանր կացությունից դուրս բերելու համար փորձեց արդյունաբերության որոշ ճյուղեր զարգացնել հովանավորչական քաղաքականությամբ: Սակայն դա չտվեց շոշափելի արդյունք, քանզի չկար պետական երկարաժամկետ հստակ ռազմավարություն: Բայց ահա 70-ական թվականների սկզբին կառավարությունը, գիտակցելով հովանավորչական քաղաքականության անարդյունավետությունը, ձեռնարկեց կառուցվածքային լուրջ քայլեր՝ շեշտը դնելով արտահանման հնարավորություններ ունեցող ոլորտների զարգացման վրա: Ըստ այդմ, ամենից առաջ սթափ գնահատեց երկրի տնտեսական այն բոլոր հնարավորություններն ու կարողությունները, որոնք ի զորու էին նպաստելու «տնտեսական աճին»: Իսկ, որ ամենից կարևորն է, այդ գնահատումն իրականացվեց՝ հաշվի առնելով արտադրության համար անհրաժեշտ երկու կարևորագույն գործոն՝ արտադրության միջոցները (ներառյալ նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներն ու ենթակառուցվածքը) և սպառողների թվաքանակը: Գնահատումը ցույց տվեց, որ Իռլանդիայի տնտեսությունը ոչ արտադրության միջոցների և ոչ սպառողների թվաքանակի տեսակետից չունեց արտադրությունը խթանող պայմաններ: Հանրահայտ է, որ Իռլանդիան չունեց (և չունի) էական նյութական պաշարներ: Տեխնիկական զինվածությունը և աշխարհագրական դիրքը մեծ հնարավորություններ չէին ստեղծում նաև Ատլանտյան օվկիանոսի բարիքներից օգտվելու համար: Բացի այդ, թույլ զարգացած իռլանդական տնտեսությունում բացակայում էին նաև ֆինանսական ռեսուրսները և ենթակառուցվածքը: Իսկ աշխատանքային ռեսուրսները չէին փայլում ոչ քանակական հատկանիշներով (մոտ 3.7 մլն բնակչություն⁴), ոչ էլ որակական (կրթական մակարդակը բավականին ցածր էր): Ընդ որում, ինչպես արդեն նշեցինք, երկրում առկա էր որակյալ աշխատուժի արտահոսք:

Առերևույթ թվում է, թե նման պայմաններում տնտեսության զարգացման մեծ տեմպերի մասին մտածելն անմիաստ էր: Սակայն կյանքը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման գործընթացում արտադրության միջոցներից և սպառողների թվից ավելի կարևոր է պետության մշակած հետևողական ու նկատակալաց ռազմավարությունը:


Ելակետ դարձնելով այն դրույթը, որ նյութական ռեսուրսները բնության կողմից տրված աղնախի մի բարիք են, որը չի ենթարկվում կառավարության քաղաքականությանը, Իռլանդիայի կառավարությունն ըստ այդմ ստեղծեց կատարյալ պայմաններ ռեսուրսների ներգրավման համար՝ օրենսդրական և վարչական ոչ մի ակտով չխանգարելով դրանց ներմուծմանը: Ավելին. տնտեսության զարգացման համար գերակա ճանաչված ճյուղերին տրվեց հարկային արտոնություններ:

Սակայն նյութական ռեսուրսների ներմուծմանը նպաստող արտոնյալ պայմանների ստեղծումը բավարար չէր արտադրության խթանման համար: Երկրում բացակայում էին նաև անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Այս խնդիրը կարող էր լուծվել հիմնականում երկու եղանակով՝ օտարերկրյա կապիտալի ներգրավման կամ տեղական խնայողությունների խթանման ճանապարհով: Իբրև կանոն, թույլ զարգացած երկրներում երկրորդ այլընտրանքը բավականին ջանքեր և ժամանակ է պահանջում: Բացի այդ, վերջինս ըստ էության չի լուծում նոր տեխնոլոգիայի ձեռքբերման խնդիրը: Սթափ գնահատելով համաշխարհային շուկայում ստեղծված իրավիճակը (ամերիկյան և ճապոնական ընկերությունները «ազատ» մուտք չունեին եվրոպական շուկա)՝ Իռլանդիայի կառավարությունը շեշտը դրեց օտարերկրյա ուղղակի


⁴ I.M.D. The World Competitiveness Yearbook, Lourens, Switzerland, 1997.

Անդրդրամների ներգրավման վրա: Սակայն ընդամենը 3.7 մլն սպառողական շուկան, անհրաժեշտ ենթակառուցվածքի բացակայությունը, անորակ աշխատուժը չէին կարող գրավիչ լինել օտարերկրյա ներդրողի համար: Ուստի «սպառողների մեծ շուկա» ապահովելու համար Իռլանդիան 1973 թ. անդամակցեց Եվրամիությանը, որի շնորհիվ տասը տարում Իռլանդիայի արտահանումը Եվրամիության երկրներ մակիկն 12 %-ից դարձավ 45 % (տե՛ս գրաֆիկ 1 և 2):

Գրաֆիկ № 1



Գրաֆիկ № 2



Այս քայլը ոչ միայն եվրոպական շուկա ապրանքների ազատ մուտք էր ապահովում, այլև հնարավորություն էր ընձեռում երկրի ենթակառուցվածքի զարգացման համար ֆինանսական խոշոր միջոցների ներգրավմանը:

Եվրամիությունից ստացված դրամաշնորհների և վարկերի հիմնական մասն ուղղվեց հեռահաղորդակցման և այլ ենթակառուցվածքների բաղադրատարրերի կայացմանն ու զարգացմանը: Քանի որ օտարերկրյա ներդրողին Եվրամիության ցանկացած անդամ երկիր ապահովում էր ազատ մուտք եվրոպական շուկա, անհրաժեշտ էր իրականացնել պետական ևս երեք անհետաձգելի միջոցառում, որոնք ներդրումների ներգրավման առումով Իռլանդիան կդարձնեին ավելի գրավիչ, քան Եվրամիության որևէ այլ երկիր: Դրանք էին՝ որակյալ և էժան աշխատուժի ակադայությունը, հարկային և մաքսային արտոնությունները ու ներդրողների շրջանում վստահության ստեղծումը և պահպանումը:

Բացի այդ, Իռլանդիայում բացակայում էր որակյալ աշխատուժը: Վերջինս արտադրության այն միակ գործոնն է, որն անմիջապես ենթարկվում է կառավարության քաղաքականությանը: Այսպես, Իռլանդիայի կառավարությունը 1970-ական թթ. ձեռնարկեց կրթական հավակարգի բարեփոխման մի ծրագիր: Իռլանդիայում կրթությունը 6-15 տարեկանների համար դարձավ պարտադիր և սկսվեց ֆինանսավորվել պետության կողմից: Ընդ որում, դպրոցներում դասավանդող ուսուցիչները պարտադիր պետք է ունենային բարձրագույն կրթություն: Բարձրագույն ուսումնական հաստատությունները զինվեցին նորագույն տեխնոլոգիայով, որը հնարավորություն էր ընձեռում մասնագետներ կրթելու գիտատար ճյուղերի համար: Դա հիմք ստեղծեց գիտատար ճյուղերում ներդրումներ ներգրավելու համար, քանի որ օտարերկրյա ներդրողին առաջարկվում էր աշխատավարձի հարաբերականոնն արդյունավետ մակարդակ: Իսկ այսօր արդեն պետությունը ցանկանում է նաև ներդնել քակալավրիատի անվճար ուսումնական համակարգ: Ներկայումս Իռլանդիայում կա 4 համալսարան, որոնք ունեն արդիական զինվածություն, որը շարունակում է մնալ տնտեսության զարգացման հիմնական խթանը:

Տնտեսության երկարաժամկետ զարգացման տեսակետից հատկապես առավել հեռանկարային ոլորտների համար կառավարությունը ստեղծեց հարկային և մաքսային խթաններ՝ հիմնականում հարկային արձանկրողների ձևով: Իսկ ներդրողների շրջանում վստահություն ստեղծելու նպատակով իրականացվեցին երկրի դրական վարկանիշի ձևավորմանը ուղղված մի շարք միջոցառումներ (օտարերկրյա ամսագրերում տնտեսության առավելություններից և հաջողություններից վերաբերող հոդվածների տպագրում, կոնֆերանսների կազմակերպում, խթանող ճյուղերի հրատարակում և տարածում, պոտենցիալ ներդրողների հետ ուղղակի աշխատանքների իրականացում և այլն): Օտարերկրյա ուղղակի ներդրումների արդյունավետ

¹ Commission of the European Communities (1993). Growth, competitiveness, employment: the challenges and the ways forward into the 21st century. Brussels: European Commission, White Paper Supplement 6/93.

ճեղքարվման համար Իռլանդիայի կառավարությունը ստեղծեց մեկ Գերդրոմների ճեղքարվման գործակալություն՝ «Իռլանդիայի զարգացման գործակալություն», որը պատասխանատու էր օտարերկրյա Գերդրոմների ճեղքարվման համար: Վերջինս ստացավ պետական խիստ աջակցություն և մի շարք լծակներ: Օրինակ, «կանաչ Գերդրոմների» համար օտարերկրյա Գերդրողին կարող էր առաջարկել առանց ռենտավճարի հողատարածք և այլն: Նշված միջոցառումները հանգեցրեցին աշխատուժի ռեսուրսների որակական հատկանիշների էական բարձրացմանը, օտարերկրյա տասնյակ խոշոր Գերդրողների ճեղքարվմանը, արտահանման ուղղվածությունն ունեցող ճյուղերի զարգացմանը և Իռլանդիայի արտահանման մշակակալից ավելացմանը, մոր աշխատատեղերի ու տնտեսական աճի բարձրացմանը: Իսկ, որ ամենից կարևորն է, Իռլանդիան 21-րդ դար թեկնածուց որպես տնտեսության հիմնականում զարգացած գիտատար ճյուղեր՝ էլեկտրոնիկա, քիմիա, դեղագործություն ու տեղեկատվական տեխնոլոգիա, ունեցող երկիր: 1998 թ. ՀՆԱ տարեկան աճն արդեն կազմեց էր 8%, այնինչ 1991թ. այն կազմում էր սուկ 2%⁴, իսկ Իռլանդիայի արդյունաբերությունը կազմեց ՀՆԱ-ի 39 %, արտահանման մոտ 90 %-ը, և որտեղ ընդգրկված է աշխատուժի 29%⁵:

Իռլանդիայի կառավարության ռազմավարությունը հետևյալն էր՝ բարձրացնել երկրի տնտեսության արտադրողականությունը, որի հիմքում, ըստ այդ երկրի քաղաքականություն մշակողների, ընկած էին որակյալ աշխատուժը, արդիականացված ենթակառուցվածքը, հարկային արտոնյալ պայմանները և սպառողների մեծ շուկան, այսինքն՝ չարգելելով արդեն տրևա տնտեսությունում գործող ճյուղերի զարգացումը՝ արտոնյալ պայմաններ ստեղծել գիտատար ճյուղերի զարգացման համար:

Միջոցառումներով տնտեսությունում գործող ոլորտների զարգացումը (տեքստիլ և գյուղատնտեսություն)՝ Իռլանդիայի կառավարությունը շեշտը դրեց այն ոլորտների զարգացման վրա, որոնք ստեղծում էին բարձր արժեքներ: Ըստ այդմ, 1981-1986թթ. Եվրամիության երկրներում տեղական արդյունաբերության ամենից մեծ օգնություն ցուցաբերել է Իռլանդիայի կառավարությունը, սակայն այդ օգնությունն ունեցել է ոչ թե տեղական արտադրողներին շուկայական մեխանիզմներից պաշտպանելու, այլ այդ մեխանիզմներին տեղական արտադրողներին դիմակայելու համար հնարավորություններ ստեղծելու միտում:

Ոչ պակաս ուշագրավ է մեկ Իռլանդիայի ռազմավարության քաղաքական նպատակադրվածությունը: Ինչպես մշեցիք, Իռլանդիան տարածքային խնդիր ուներ Մեծ Բրիտանիայի հետ, և երկրի արտահանումը դեպի եվրոպական շուկա հնարավոր էր միայն Մեծ Բրիտանիայի տարածքով: Իռլանդիայի կառավարությունն այս խնդիրը լուծեց Եվրամիությանն աճյալակցելու միջոցով: Ավելիք, Իռլանդիայի կառավարությունն աճյալակցեց գրեթե այն բոլոր միջազգային կազմակերպություններին, որոնք կարող էին Մեծ Բրիտանիային մեղադրել տնտեսական զարգացման գործընթացում Իռլանդիային խոչընդոտելու համար: Դրանով իսկ Իռլանդիան ապահովեց իր տնտեսության սահուն զարգացումը՝ միջազգային կազմակերպությունների շրջանակներում օգտագործելով նույնիսկ Մեծ Բրիտանիայի օգնությունը:

Այս ամենից կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Երկրի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է հստակ, նպատակաուղղված և երկարաժամկետ ռազմավարություն, որով պետք է առաջնորդվի երկրի կառավարությունը անկախ իշխանության փոփոխություններից:

2. Եթե երկիրը ընտրել է ազգի բարօրության ճանապարհը, ապա մեծ ուշադրություն պետք է դարձվի կրթական համակարգի բարեփոխմանը և մասնագետների վերապատրաստմանը, որը պետք է ունենա շարունակական բնույթ:

3. Ցանկացած երկրի զարգացման գործընթացում անչափ կարևոր է ճանապարհների և հեռահաղորդակցության, ինչպես նաև ենթակառուցվածքի համակարգի անխափան գործունեությունը:

4. Արտահանումը պետք է միտված լինի տնտեսության գիտատար ճյուղերին՝ շեշտը դնելով Գերդրոմների ճեղքարվման վրա:

Եթե փորձենք Իռլանդիայի տնտեսական զարգացման մոդելը կիրառել Հայաստանի համար, ապա կարող ենք ստել, որ Իռլանդիայի մեծ Հայաստանը ևս, չունենալով ռեսուրսների

⁴ Achieve Competitive Advantage in Ireland. Ireland Industrial Development Agency, 2000. Ireland.

⁵ Str'u R. O' Donnell: Ireland & Europe- challenges for a New Century" in ESRI, 17, March 1997.

մեծ ծավալներ, իր ռազմավարության հիմքում պետք է դնի աշխատուժ ռեսուրսի որակական հատկանիշների զարգացման խնդիրը:

Թեև 1990-ական թվականներին Հայաստանը քննարկել էր աշխատուժ ռեսուրսի բարձր որակական հատկանիշներով, սակայն այսօր մենք այդ հարստությունը կորցնում ենք: Ներկայումս Հայաստանում կա ավելի քան 60 բուհ⁶, որոնք զրեթե հագեցած չեն արդիական տեխնիկայով: Միևնույն ժամանակ ուսումնական համակարգում աշխատավարձը բավականին ցածր է, որի հետևանքով փորձառու մասնագետներն աշխատանք են փնտրում ուսումնական համակարգից կամ շատ հաճախ՝ երկրից դուրս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի հիմնական բուհերը պետական են, ընդ որում՝ վճարովի, ուստի ՀՀ կառավարությունը մեծ ուշադրություն պետք է դարձնի այդ ուսումնական հաստատությունների տեխնիկական զինվածության արդիականացմանը, որը կնպաստի որակյալ մասնագետների պատրաստմանը, իսկ սա իր հերթին կդառնա մի մեծ խթան ՀՀ գիտատար ճյուղերի զարգացման համար: Այսինքն՝ պետությունը պետք է լինի առավելագույնս շոյալ այս համակարգի վերազինման հարցում:

Սպառողների մեծ շուկայի ստեղծման համար Հայաստանը ճիշտ մոտեցում ցուցաբերեց՝ անդամակցելով ԱՊՀ կազմակերպությանը: Վերջինս ապահովում է արտադրողի համար ազատ մուտք ԱՊՀ երկրների ավելի քան 250 մլն-ոց շուկա, սակայն առկա ճանապարհորդական միջոցները, ինչպես նաև վարչական խոչընդոտներն արտահանողների համար ոչ միայն չեն ստեղծում գրավի պայմաններ, այլև հաճախ վճատում և վաճում են: Այնչի, հայկական շուկան խիստ փոքր է արտադրության մասշտաբի էֆեկտը ապահովելու համար:

Պետության կողմից մի շարք լուրջ քայլեր են իրականացվել նաև երկրում առկա ֆինանսական պակասը համալրելու ուղղությամբ: Ընդունվել է ՀՀ կառավարությունն այսօր մեծ ուշադրություն է դարձնում օտարերկրյա կապիտալի ներգրավմանը, բայց երբ մեր ստեղծած պայմանները համեմատում ենք ԱՊՀ անդամ այլ երկրների առաջարկած ներդրումային պայմանների հետ, ապա պարզվում է, որ դրանք այնքան էլ գրավիչ չեն օտարերկրյա ներդրողի տեսանկյունից: Բացի տրանսպորտային և հեռահաղորդակցության խնդիրներից, որոնք ներկայումս արագ լուծելի չեն, Հայաստանի տնտեսության ոլորտում առկա են մի շարք վարչական խոչընդոտներ: Օրինակ, թեև մաքսային օրենսդրությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային ստանդարտներին, սակայն մաքսային պայմանները, նորմատիվ ակտերը և օրենսդրությունը կիրառող աշխատակիցները մեծապես խոչընդոտում են արտահանման և ներմուծման գործընթացներին:

Նմանատիպ թերացումներ կան նաև հարկային համակարգում: Ընդ որում, օրենքները փոփոխվում են բավականին արագ, և վերջիններիս պաշտոնական թարգմանությունները չեն կատարվում, ինչն իր հերթին լրացուցիչ արգելք է դառնում օտարերկրյա հարկատուի համար: Միաժամանակ, ներկայիս ֆինանսական սուղ պայմաններում ԱԱՀ հարկումն իրականացվում է ամենամսյա կտրվածքով, այսինքն՝ արտադրողի ձեռքից վերցվում են «չբաճառու միջոցները» և դրանով իսկ նվազեցնում արտադրության ընդլայնման առանց այն էլ սահմանափակ հնարավորությունները:

Գովելի է ՀՀ կառավարության կողմից ներդրումների ներգրավմամբ զբաղվող գործակալության ստեղծումը, սակայն կրկին թերի են իրականացման լծակները: Ֆինանսավորումը անվանոն է, գործակալությունը չունի ինտերնետ կապ, միջոց է դա գործակալության գործունեության «գործիքներից» ամենահիմնականն է: Գործակալությունը չունի նաև տնտեսական որևէ լծակ, որով կարողանար ներգրավել ներդրողին, մինչդեռ նմանատիպ մի շարք լծակներով օժտված են ներդրումների ներգրավման այն բոլոր գործակալությունները, որոնք տվյալ քննազատում ունեցել են մեծ հաջողություններ:

Այսպիսով, Հայաստանի կառավարությունն ըստ էության փորձել է ստեղծել այն բոլոր անհրաժեշտ նախապայմանները, որոնք կարող են ապահովել տնտեսության զարգացում, սակայն առայժմ դրանք չունեն ամբողջական տեսք: Պատկերավոր սասած՝ ՀՀ կառավարությունն իրականացրել է հիանալի ակազիր, սակայն չի հասցրել մաքրագրել այն: Այստեղից հետևում է, որ ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ են մի շարք անհապաղելի միջոցառումներ, որոնցից առավել կարևորներն են.


⁶ Տվյալները վերցված են ՀՀ կրթության նախարարության փոստաթղթային ֆոնդից:

1. Կառավարությունն իր ռազմավարության հիմքում պետք է դնի արտադրողականության բարձացման գաղափարը, որից էլ պետք է բխի կառավարության ցանկացած որոշում, քաղաքականություն կամ միջոցառում:

2. Կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները չպետք է սահմանափակվեն բուհերի հավատարմագրման գործընթացով, այլ անհրաժեշտ է պետական ֆինանսավորմամբ էապես մեծացնել պետական բուհերի տեխնիկական հզորությունը, ինչպես նաև դասավանդման գործընթացում ընդգրկել օտարերկրյա թայտնի համալսարանների որակյալ դասախոսների: Պետք է ավելացվեն պետպատվերի տեղերը բուհական այն մասնագիտությունների համար, որոնք ունեն գիտատար ուղղվածություն: Այս է հուշում ոչ միայն Իլյանդիայի, այլև վերջին տասնամյակում տնտեսական աճի մեծ տեմպեր ունեցած Կորեայի Հանրապետության, Սինգապուրի, Ճապոնիայի, Թայվանի և Արևելյան Ասիայի մի շարք այլ երկրների փորձը:

3. Հանքի որ հեշտ չէ վերափոխել մարդկային հոգեբանությունը, ուստի հարկային և մաքսային համակարգում առկա չարաշահումներից խուսափելու համար այդ համակարգերի օրենքների և գործընթացների առավելագույն պարզեցման կարիք է զգացվում:

Գծնապատկեր No 1



4. Օրջափակման խնդիրը պետք է լուծել տնտեսական ճանապարհով. անդամակցել միջազգային և տարածաշրջանային այն բոլոր կազմակերպություններին, որոնց շրջանակներում հնարավոր կլինի մեր հարևան երկրներին մեղադրել իրենց պարտականությունների չկատարման կամ թերացման համար: Այսինքն՝ Թուրքիան և Ադրբեջանը կմեղադրվեն ոչ թե քաղաքական, այլ տնտեսական հարցերում: Այս մոտեցումը բավականին արդյունավետ կիրառեց Իռլանդիան Մեծ Բրիտանիայի նկատմամբ՝ նրանից ստանալով համապատասխան դրամաշնորհներ իր երկրի ենթակառուցվածքի բարելավման համար:

Ելնելով վերը ասվածից՝ ՀՀ կառավարության տնտեսական զարգացման ռազմավարության գծապատկերը, մեր կարծիքով, կունենա ներկայացված տեսքը (տե՛ս գծապատկեր №1):

Ինչպես երևում է գծապատկերից՝ խիստ կարևորվում է ՀՀ կառավարության կողմից մշակված և իրականացվող ռազմավարության հետևողականությունը, քանզի ոչ միայն ռազմավարության չգոյության, այլև ռազմավարության մեջ հետևողականության սկզբունքի բացակայության դեպքում տնտեսության զարգացման համար բնական ռեսուրսների առկայությունը դառնում է «անհրաժեշտ» և պարտադիր պայման՝ իր բոլոր բացասական հետևանքներով, որոնց հաղթահարման ուղիներին է նվիրված այս հոդվածը:

A. B. ОГАНЕСЯН - К вопросу о возможной модели развития экономики РА - В результате исследования опыта экономического развития разных стран мира появляется уверенность, что в большинстве случаев наличие природных ресурсов, будучи необходимым условием, недостаточно, однако, для реального развития. Каждое государство ставит своей целью быстрое развитие экономики, но на практике не все достигают поставленной перед ними цели. Отсюда следует, что основной причиной медленных темпов экономического роста развивающихся или неразвитых стран является выбранная ими неправильная стратегия развития. В подобных случаях самой легкой и короткой дорогой становится признание собственной "неправильной стратегии" и выбор правильной. Именно так поступили Ирландия, Тайвань, Сингапур и Республика Корея, которые буквально за одно поколение из малоразвитых стран перешли в ряды развитых. В частности, почти все указанные страны, начав с развития сельского хозяйства и легкой промышленности, перешагнули через порог нового столетия с развитыми наукоемкими отраслями экономики. В основе развития этих стран стояла целенаправленная и долгосрочная стратегия, включающая ряд шагов по реформированию системы образования и переподготовке специалистов, обеспечению беспрепятственной деятельности системы инфраструктур, а также направленность экспорта в наукоемкие отрасли, что и предлагается сделать по отношению к экономике Армении.